


Q87.1
7-30

087.1

7-30

JUN 200



ՊԱՏՄԱԿԵՐՆԵՐ
ԼԵՆԻՆԻ
ՄԱՍԻՆ


ՊԵՏԿՈՍ

2186
5/1/11

Апр.
H 3-3073a

087.1

71-30



Պ Ա Տ Մ Վ Ա Ծ Ք Ն Ե Ր
Լ Ե Ն Ի Ն Ի
Մ Ա Ս Ի Ն

Թարգմ. Աս. ԶՈՐԹԱՆ
Նկարներ՝ Ա. ԴԱՎԻԴՅԱՆԻ



ՀԱՅ. № 10605

Պ Ե Տ Շ Ր Ա Տ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՓԵՂՈՍԻՆ ՆԻԿԻՏԻՉՆԱՆ ՅԵՂԱՎ
ԼԵՆԻՆԻ ՄՈՏ

Հայրս տանիքներ սարքող եր, աշխատում
եր Սմոլնիում, բայց հենց հեղափոխությու-
նից առաջ մեռավ: Այնպես վոր ոտճիկն ել
կիտով չափ մնաց չստացված: Յեկավ ժամա-
նակավոր կառավարությունը, մայրս գնաց
փողի համար. բայց վերադարձավ ամոթով:
Նրան միայն հարցրել եյին.

— Իսկ դու տեսել ես, թե գորտերն ինչ-
պես են թռչում:

Չմեռը մեզ հեղեց, մայրս ասավ.

— Բոլորը Լենինին գովում են հիմա. մի
չգնամ եզ Սմոլնին:

Մի առավոտ ել վեր ենք կենում, պա-
ռավը չկա: Կարծում ենք ժամ ե գնացել,
բայց Սմոլնի յեր գնացել... Յեվ ինչ եք
կարծում: Անցնում ե բոլոր կաբինետները
և մտնում ե Վլադիմիր Իլյիչի մոտ... Տես-



նում է՝ գրում է ու հետն ել սառը թեյ է խմում կանֆետով...

Մայրս բոլորովին չի կարծում, թե դա նա՛յե—լենինը—այն ժամանակ նրա պատկերները քիչ էյին,—ու հարցնում է.

— Դուք, պարոն, խնդիրներ եք ընդունում, թե քննում եք:

լենինը ժպտում է.

— Նայած, ինչպես պատահում է, տիկին: Դուք ի՞նչ եք ուզում:

— Մարդիկ ինձ Լենինի մոտ են ուղարկել, Վլադիմիր Իլյիչի: Ասում են, քու գործը, Ֆեդոսիա Նիկիտիչնա, բոլոր գլխավորների մեջ միայն Լենինը կարող է լուծել... Իսկ յես նայում եմ ձեզ, թե վճնց արագ եք գրում, ու մտածում եմ. «Ա՛յ լավ գրագետ պարոն է: Յերևի, հասարակ մեծավորներից չի...»: Լենինին վճռտեղ գտնեմ, իմ գրության մեջ չե՞ք մտնի:

Մայրս հանգիստ նստում է ու կարճ պատմում.

Լենինի աչքերն ուրախ փայլ են ստանում, ծիծաղում է:

— Ճիշտ է, Ֆեդոսիա Նիկիտիչնա... Առանց Լենինի յուրա կերթանք: Կանչում է



Ֆեդոսիա Նիկիտիչնան հանգիստ կերպով նսեց ու համառոտ գեկուցեց

աշխատակցին, տետրից մի թուղթ է տալիս:
— Ընկեր, շտապ կարգավորեցեք Ֆե-
զոսիա Նիկիտիչնայի գործը:

Մայրս տուն է գալիս ու փողը դնում
է սեղանին:

— Բոլոր մեծերը Սմոլնիում լափս են:
Առանց Լենինի ել գործը գլուխ բերին:

Իսկ մի ամիս անց՝ շուկայից բերում է
մի լուսանկար:

— Այ, առել եմ են մեծավորին, վորի
կարինետում նստել է յի...

Մենք նայեցինք ու հառաչեցինք:

— Մայրիկ, ախր դա Լենինն ինքն է
յեղել:

Պրի յե առևմտ 1928 թ. Հյուսիսային
յեկարուզու վագոնում:

—

ԿՈՃԱԿԸ

Լենինը յեկել է մեզ մոտ՝ գործարան:
Ինձ ձայն են տալիս.

— Նատարովա, վերարկուն կվերցնես:

Ակումբը տաք է: Լենինն սկսեց խոսել:
Վերարկուն գցեց աթոռին: Յես վերցրի ու
տարա հանդերձարանը: Տեսնեմ՝ ձախ փեշի
միջին կոճակը չկա: Յես իմ ժակետից մի
կոճակ պոկեցի ու հաստ թելով կարեցի
Լենինի վերարկույին, վոր յերկար դիմանա:
Լենինը գնաց, չնկատեց: Իսկ կոճակը մի քիչ
այնպես չեր: Յեվ այդ բանն ինձ հաճելի
յեր, ու վոչ-վոքի չեմ հայտնում իմ գաղտ-
նիքը:

Իրանից հետո բավական ժամանակ ան-
ցավ: Անցնում եմ Լիտեյնի փողոցով, տեսնեմ
«Ֆենիքս» լուսանկարչատան լուսամուտում
Լենինի մեծուցրած պատկերը: Հագինը նույն
վերարկուն է: Ուշադիր նայում եմ, տեսնեմ
կոճակը նույնն է— իմ կոճակը:

Լենինն այդ ձմեռ ել մեռավ: Յես Լի-
տեյնի փողոցի լուսանկարչատնից ձեռք բե-
րի նվիրական պատկերը:

Դա հիմա շրջանակի մեջ գրված է իմ
հայելու մոտ:

Ամեն որ մոտենում եմ, նայում ու լաց
լինում:

Իսկ իմ կոճակը կարված է վրան:

Դրի չե առնված 1927 թ. Արխան-
գելսկի կադավում՝ «Տեսուչի նա-
սարգայի պատմածից:

ՎԱՌԱՐԱՆ ՉԻՆՈՂԸ

Մեզ մոտ մի մարդ կար՝ ազգանունը Բեն-
դերին: Գյուղի գործում ամեն ինչ ձեռից գա-
լիս եր. վառարաններ եր շինում, նստարան,
սահնակ:

Մի անգամ դա գնում է անտառ ու սկսում
է ահա մի թխկի ծառ սղոցել: Սղոցում է դա
այդ թխկին՝ ու հանկարծ լսում է.

— Բարի որ:

Բենդերինն, ի հարկե, հետ է նայում: Տես-
նում է — ինչ-վոր տղամարդ է կանգնած:
Բենդերինը թե՛

— Ներողություն, — ասում է, — ձերդ
բարձր բարեձնություն:

Իսկ այդ մարդը պատասխանում է.

— Յես, — ասում է, — ձերդ բարձր բա-
րեձնություն չեմ: Յես, — ասում է, — ընկեր
Լենինն եմ:

Բենդերինը նորից նրան.

— Ներողութիւնս,—ասում է,—ընկեր
լենին:

Իսկ լենինը նրան.

— Դե սղոցի-կտրի:

Ու ինքը քաշվում, կանգնում է մի կողմ:
Նայում է, թե այնուհետև ի՞նչ է անելու:
Մի այդպիսի մեծ ծառ ի՞նչպես է առանց
ձիւ գյուղը տանելու:

Բենդերինը սղոցով չափում է, ինչ չափ
իրեն պետք է, կտրում է ու սարից գլոր-գլոր
տանում ցած: Հետո վերադառնում է նորից
ու ելի կտրում ծառը:

Լենինն ասում է նրան.

— Քեզ, գուցե, ոգնե՞նք:

— Հարկավոր չի, ինչ եք ասում: Յես
ինքս կգլորեմ:

Հիմա ժամանակն ուրիշ է: Հենց հնձի
ժամանակը: Նույն այդ Բենդերինը գնում է
անտառ, նորից շինանյութի:

Կտրում է մի թխկի կամ մի կեչի, անց-
նում է գետակը և նստում հանգստանալու:
Բանն յերեկոյան դեմ է լինում:

Նստած նայում է, ու տեսնում է—ահա
յերեք հոգի գալիս են հնձածի վրայով:

Իսկ նա, այդ Բենդերինը, այնպես մի

հանդուգն գեղացի յէ: Գոռում է նրանց վրա:

— Ի՞նչ եք եղտեղ թրև գալիս: Գիտե՞ք
չէ, հիմա խոտը ինչ գին ունի:

Ու հայհոյում է դրանց... Մոտենում են,
և մեկը նրանցից ասում է.

— Ախ, ծերուկ, ինչ տեղին հայհոյում ես:

Այստեղ Բենդերինը ճանաչում է նրան:

— Ներողութիւնս,—ասում է,—ընկեր
լենին:

Չմեռը գալիս է: Սարսափելի նեղութիւն
են քաշում վառարան շինողների ձեռից:

Նստել է լենինն իր տանը և հարցնում է.

— Այստեղ գյուղում մի վորևե վառա-
րան շինող չկա՞, վոր ազատվենք այս ծխից:
Իսկ այնտեղ Բենդերինին գիտեյին վոր-
պես վառարան շինող:

— Վառարան շինող,—ասում են, մեկը
կա այստեղ:

Յե՛վ գնում են նրան կանչելու:

Հետաքրքիր է...

Յերկու զինվորական սահնակով գնում են
նրա մոտ, մտնում են տուն ու հարցնում.

— Վառարան շինող, դ՞ու՞ յես:

Բենդերինը պառկած եր փեչի վրա: Գը-
լուխը կռացրեց այնտեղից ու պատասխանեց.

— Յես եմ:

— Պատրաստվիր, գնանք սովխող:

Ըհր...

Բենդերինը հուզված, ջղային վիճակումն է: Յեվ նա ասում է կնոջը.

— Ե, Կատյուխա, մնաս բարով: Մենք ել իրար չենք տեսնի: Լենինը յերևի, իմ հին կոպտությունները հիշել է:

Ու այդ գինվորականների հետ նստում, գնում է սովխող:

Հասնում է տեղ: Լենինը դուրս է գալիս բակը և ասում է նրան.

— Իսկ յես, ծերուկ, հիշեցի քեզ: Սյդ գնլ եյիր, — ասում է, — անտառում թխիկ կտրում, իսկ հետո մյուս անգամ խոտատեղում վախեցրիր ինձ:

Բենդերինը վախից հիվանդանում է մինչև անգամ:

— Ներողություն. — ասում է:

Իսկ Լենինը նրան.

— Ե՛, այդ դատարկ բան է: Խոտատեղը դու ինձ տեղին հայհոյեցիր, յես լավ չեյի արել, վոր հնձած խոտերի վրայով եյի գընում: Իսկ հիմա արի խոտենք, թե քեզ ինչո՞ւ համար եմ կանչել: Յես մի մեծ խոնդիրք ունեմ քեզ: Տեսնում ես ինչպես եմ

ապրում: Ամբողջ պատերը ծխից սևացել են: Դու կարո՞ղ ես ծխնելույզը կարգի գցել:

— Կարող եմ, — ասում է:

Այգտեղ Բենդերինը կավ է պահանջում, աղյուս է պահանջում սկսում է աշխատել:

Աշխատանքը վել ջույնում է, Իլի:ր շնորհակալություն է հայտնում նրան, վճարում է ինչ պետք է և շատեցնում է հետը թեյ խմելու:

Յեվ անա Բենդերինը սահնակով գալիս է տուն և ծանր ու մեծ ասում է կնոջը.

— Կատյուխա, յես լնկեր Իլի:չի վառարանը սարքեցի և հետն ել թեյ խմեցի:

Գրի յե առեված 1937 թ. փետրվարին Մոսկվա ի մարտի "Ռոյուսի օրանի" Գուկի գյուղում Ալեքսեյ Միխայլովիչ Շուրիգինի պատմածից:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Յես այն ժամանակ տասնմեկ-տասներկու տարեկան եյի: Մայրս ինձ ուղարկեց Յամ*) խանութը: Յամը — չորս վերստ հեռու յե մեզնից: Գնում եմ: Մեկ ել հետեվիցս մի մարդ ե հասնում: Հագին կաշվե տուժուրկա յե, գլխին կեպի:

Հարցնում ե.

— Դու, աղջիկս, ո՞ւր ես գնում:

— Յամ, Գարբաչից ալյուր առնելու:

— Իսկ ինչո՞ւ յես գնում Գարբաչի մոտ: Գնա կոոպերատիվ, այնտեղ ավելի եժան ե:
— Իսկ վորտե՞ղ ե կոոպերատիվը: Յես չգիտեմ:

Նա ցույց տվեց ինձ կոոպերատիվը, իսկ ինքը գնաց դեպի Գորկի:

Հիմա, մի շաբաթ անց, ուսուցչուհի



— Դու, աղջիկ, ո՞ւր ես գնում

*) Յամը գյուղ ե Գորկի մոտ, ուր ապրում եր Իլիչը:

Կլավդիո Նիկոլաևնան ասում է ինձ.

— Գնանք, Նատաշա, Գորկի:

— Ինչո՞ւ համար:

— Յես այնտեղ մի ծանոթուհի ունեմ:

Հիվանդանոցում աշխատում է:

Ե, վեր կացա գնացի հետը:

Տեսնեմ — այդ մարդը գալիս է:

Նա ինձ իսկույն ճանաչեց, մոտեցավ ու հարցնում է.

— Հը, աղջիկս, ալյուրը վճրտեղից առար:

Յես ասում եմ.

— Կոտպերատիվից:

Նա ծիծաղեց ու գնաց:

Յերբ նա գնաց, Կլավդիո Նիկոլաևնան ասավ ինձ.

— Նատաշա, դա Լենինն է:

Գրի յն առնված 1937 թ. Մոսկվաի մարզի Պ. Գոսսի օրհանի Փ. Բոչանցի գյուղում գյուղխորհրդի քարտուղար և Սուսլովա, Չժ օ պա-մաժից:

ՄԵՂՈՒՆԵՐ

Աշխատում էյի յես մեղվանոցում և հանկարծ տեսնում եմ — ձեռքերով աղացիայի թփերի միջով ճանապարհ քանալով գալիս է Իլիչը:

Յես վազեցի դեպի նա.

— Վլադիմիր Իլիչ, կանգնեցեք: Յես ձեզ գլխաշոր կտամ, վոր մեղուները ձեզ չկծեն: Իսկ նա թե՛

— Վոչ մի մեղու ինձ չի մոտենա:

Յեվ ճիշտ վոր. Վլադիմիր Իլիչն այնքան հանդարտ, հանգիստ անցավ, վոր վոչ մի մեղու չկծեց նրան:

Այդ ժամանակ յես հարցրի նրան.

— Վլադիմիր Իլիչ, բացատրեցեք ինձ. ի՞նչպես գտար իմ մեղվանոցը: Ձե՞ վոր դուք խճուղով չեք յեկել, այլ թեքվել եք դեպի մարգագետինը և մյուս ճանապով յեկել ինձ մոտ մեղվանոց: Ձեզ ո՞վ ցույց տվեց այս ճանապարհը:

28 541



Վլադիմիր Իլյիչը ծիծաղեց.

— Ընկեր Սկորոմիսլով, ինձ այս ճանապով քեզ մոտ բերին քո աշխատավորները — մեղուները: Յերբ յես հեռանում եյի մարգագետնից, տեսա մեղուներ, վոր թռչում եյին հետ ու առաջ: Իրանք ել առաջնորդեցին ինձ մինչև մեղվանոցը:

Այս լսելով՝ յես շատ հուզվեցի:

— Վլադիմիր Իլյիչ, դուք մեծ հանճար եք: Անգամ յես՝ մեղվաբուծության հրահանգիչս, մեղվանոց գալիս, յիրբեք գլխի չեյի ընկնի՝ ճանապ հարցնել մեղուներից:

Գրի յի առնված 1937 թվին Մոսկվայի մարզի Պոպոսկի օջառնի Յամ գյուղում, 63 տարեկան Գյուրգի Վասիլեվիչ Սկորոմիսլովայի պատմածի:

ՀՅՈՒՐԸ*)

Վ. Պ. Մալաֆյեվա. Վատ ժամանակներ եյին — սլատերազմ, անբերրիություն ու վոչ մի ապրանք. շապիկն լինչ է — եզ ել վոչ մի տեղ չեյիր կարող առնել: Նավթն ել կտրվեց — թեկուզ մարխ վառիր: Կուլակներն, իհարկե, իրենց յերգն եյին յերգում, թե իբր Նեռի ժամանակներն են:

Բայց և այնպես ժողովուրդն եսպես եր մտածում. եհ, թեկուզ լավ չենք տաքանում

*) 1920 թ. նոյեմբերի 14-ին Վլադիմիր Իլյիչ Լենինը Ն. Կ. Կրուպսկայի հետ միասին գնաց Կաշինո գյուղը ելեկտրական կայանի բացմանը ներկա լինելու: Իլյիչն այստեղ զրուցեց գյուղացիների հետ, ապա յելույթ ունեցավ միտինգում, մի ճառ ասաց, վորի մեջ հազորդեց Կարմիր բանակի՝ Վրանգելի նկատմամբ ունեցած հաղթանակների մասին: Այս պատմումը՝ Իլյիչի գալու մասին գրի յես առնված Մոսկվայի մարզի Վոլոկուրամսկի շրջանի Կաշինո գյուղի կոլխոզնիկներ Ս. եքսեյ Անդրեևիչ Աշմարինի (60տ.) և Վասիլիսա Պավլովնա Մալաֆյեվայի (72տ.) պատմածներից:

հիմա, սով ե ու մութ, բայց խորհրդային
իշխանութունն իրենը կանխ: Պատերազմը
վերջանա—կապրենք:

Յես արդեն չեմ հիշում, թե ինչից սկսե-
վեց, միայն թե ամեն բան խանգարվեց. յե-
կեք մեզ համար լույս սարքենք: Սերգեյ
Կուրկովն սկսեց փող հավաքել: Մարդ կար,
վոր հավատում եր, թե կարող ենք մեր լույսն
ունենալ, մարդ ել կար՝ չեր հավատում: Կու-
լակները հո, ծիծաղում էին:

Բայց և այնպես մենք մերն արինք:

Սարայում մի մեդենա դրինք, խրճիթի
միջով մի լար անցկացրինք. հիմա կլուսա-
վորի, ինչպես քաղարում:

Ել չեմ հիշում, թե խոսքն, ումից դուրս
յեկով, միայն սկսեցին խոսել, թե՛ «Լենինը
գալիս ե մեզ մոտ»: Ձեզ մատաղ, միթե
Լենինն ինքը: Եդ հիմա յենք ուրիշ կերպ
հասկանում, բայց այն ժամանակները, ինչ-
պես կ'անիքն էին կարծում նրա մասին,
Լենինը մի տեսակ թագավորի տեղն եր:
Մարդիկ կախին, վոր հավատում էին, թե
նա կգա մեզ մոտ, մարդիկ ել կային ծի-
ծաղում էին. միթամ, թե նա հենց դրան եր
սպասում ելի, վոր Կաշինո գա:

Բայց և այնպես սպասում ենք: Մարիա
Նիկիտիչնա Կաշկինոյի տունը վերցրինք, զար-
դարեցինք, ու թեպետ վատ ժամանակներ
էին, բայց ժողովուրդը բերում եր—վորը
հավ, վորը խնձոր, վորը յուղ... Յես դողող
պատրաստեցի: Ուրիշները գարեջուր:

Ս. Ա. Աշմարին. Հիշում եմ մեկ ել-
դուան մոտ շորխա ամրացրինք, իսկ դրա
մոտ մի առողջ գյուղացի կանգնեցրինք,
վոր առաջ շվեցարություն եր արել, ու կար-
գադրեցինք, վոր Լենինի՝ յուրքը, գղակը
վերցնի, ինչպես այդ չաղաքում են անում:

Վ. Պ. Մալաֆյեվա. Ամեն ինչ պատ-
րաստեցինք, ամեն ինչ սարքեցինք, իսկ նա
դեռ չկա ու չկա: Հանկարծ լսում ենք—մե-
քենա յե գալիս:

Ս. Ա. Աշմարին. Վոչ թե հանկարծ:
Մենք փողոցում կանգնած էինք: Լսեցինք—
յերեխաները գյուղի են ծայրում արմուկ
բարձրացրին,—եդ Լենինն եր մեքենայի
դուռը բաց արել, յերեխաներին կանչում եր
իր մոտ:

— Վորտեղ ե այստեղ ձեր ելեկտրական
կայանը:

Իսկ յերեխաները թե՛

— Նստացրու մենք յեզ ցույց կտանք:
Նա յերեխաներին առավ մեքենայի մեջ,
մոտեցան...

Վ. Պ. Մալաֆյեվա. Նրա հետ միասին
ներս ե մտնում Նաղեժդա Կոնստանտինովնա
Կրուպսկայան, իսկ մեր այդ շվեցարը
մոտենում ե և ասում.

— Համեցեք, ընկեր լենին:

Իսկ նա.

— Ձե, թույլ տվեք յես ինքս հանվեմ:
Չթողեց մուշտակը հանել, ինքը հանեց:
Ե, ամենքը հուզված մոտենում են նրան:
Նա այնպես սիրալիբ աչքերը կուշ ե ածում,
լավ նայում ե ամեն մեկին ու ամեն մեկն
ել ձեռք ե տալիս-բարևում: Նրանք նստեցին:
Ու բոլոր գյուղացիներն ել նստեցին:
Ամենից առաջ նրան մի գավաթ գարեջուր
տվին, վորպես թանգագին, ցանկալի հյուրի:
Նա գավաթը վերցրեց, ու ասում ե.

— Խմել-ո՞վ ե պատրաստած:

— Վոչ, վլսդիմիր Իլիչ, խմել չենք
քցել:

Խմեց, բեղերը սրբեց:

— Լավն ե:

Իմ դողդողը մատուցին նրան:



— Վորեդ ե այսեդ ձեռ ելեկրական կայանը

— Շատ է,—ասում է,—մի կտոր հե-
րիք է:

Եհ, բոլորը նայում են նրան, ու ամեն
մեկն ուրախ է. «Աման, սա ի՞նչ լավ մար-
դավարի մարդ է: Պարզ ու վարվեցող ու
զրուց անելու ել սեր ունեցող»:

Ա. Ա. Աշմարին. Չրուցների մասին
յես կասեմ: Մոտեցինք եղտեղ հացի-ցորենի
բաշխման մասին: Գեղացիք դանդաղացին.
մթամ հայտնի չի մի սնտուկ թյուկից ի՞նչ-
քան հաց կպահանջեն: Հայտնի չլինելու պատ-
ճառով շատերը քիչ են վարում: Յի թե հայտ-
նի լինե՞ր՝ ավելի լավ կլինե՞ր: Նախաքներ
չկան, չորաշահները շատացել են, քիչ է
մնում մարդու կաշին քերթեն,—ես բանի
մասին ել գանգատվեցին:

Կային ենպեններն ել, վոր ամեն ինչ
ծածկում, սվաղում էյին, թե մթամ ամեն
ինչ լավ է գնում, ընկեր լենին: Իսկ եղ բանը
նրա համար զգվելի յեր. մեզ, իբրև թե, հար-
կավոր է ճշմարտությունն իմանալ, իսկ խա-
բեբայություն պետք չի: Կային մարդիկ ել,
վոր բաց ճակատ՝ լավն ել էյին ասում, վատն
ել: Դրանց նա լսում եր մեծ ուշադրու-
թյամբ:

Ու մի սրտալի, անկեղծ զրուց սկսվեց:
Նա մեզ հարցովորձեց վարի մասին, կալսե-
լու մասին, գեղական գործերի մասին: Հրակ-
տորի, մեքենաների մասին հայտնեց, թե,
իբրև, մեքենաների կանցնենք: Մաստայավ
տրակտոր ու կալսիչ մեքենա ուղարկել:

Եղ ժամանակ սկսեց մթնել, գավառից
մի լուսանկարիչ յեկավ, սա թե՛

— Ընկեր լենին, շուտով կմթնի, իսկ ինձ
խնդիր է տրված՝ անպայման ժողովրդին
նկարել ձեզ հետ միասին:

Բոլորը դուրս թափվեցին փողոց: Հավաք-
վեցին բազմաթիվ յերեսխաներ: Ու բոլորը—
թե ծէրերը, թե յերիտասարդները, թե յե-
րեսխաները—աշխատում են լենինին ավելի
մատ նստել:

Նկարվեցին, գնացին միտլնգ: Տղաները
չըջապատել են նրան, աղմկում են, իսկ նա
ծիծաղում է:

— Հը, ի՞նչպես է: Հիմա կրոն սովորեց-
նում են ձեզ:

Տղաները բացականչում են.

— Հիմա կրոն չկա: Յեվ ստտված ել,
քեռի, չկա: Եղ յերկարամազ տելսերներն
են հնարել:

լենինն ավելի յե ծիծաղում:

Միտինգում նա կարճ խոսեց. պատերազմը կվերջանա, մեր վերքերը կբուժենք ու առաջ կերթանք: Կսկսենք նոր ձևով մշակել հողը, նոր ձևով կառուցել կյանքը: Ամենագլխավորն այն է, վոր գյուղացիները հետ չմնան բանվորներից, նրանց հետ միասին քայլեն, կապված լինեն նրանց հետ, իսկ դա — բանվորների ու գյուղացիների միությունը մի այնպիսի ուժ է, վոր ամեն ինչի կհաղթի և ամեն ինչ կշինի-կկառուցի ինչպես պետք է:

Վ. Պ. Մալաֆյեվա. Ամեն բան առաջուց գիտեր: «Աշխատանքն, —ասում է, — կթեթեվանա»: Բա միթե ճիշտ չի: Հինգ վուշը վերցնենք: Չե վոր փայտե բաներով էլինք թակում, իսկ հիմա — հրեն, ինչ մեքենաներ են առաջ յեկել կոլխոզներում:

Ա. Ա. Աշմարին. Շուտով նա մեզ տրակտոր ու կալսիչ ուղարկեց: Բայց վոչ թե եստեղե*), վոչ ել չեկաբի, այլ ֆորդձոն: Մյուսներն այն ժամանակ չկային, վորելը մենք եզ տրակտորով վարում էլինք, բայց մտածում էլինք. «Մեր գաշտերի հա-

*) Եստեղե — Ստալինգրադի տրակտորի գործարանի տրակտոր:

մար մեքենան անհարմար է: Մեզ մոտ նեզվածք է դրա համար. միջնակները խանդարում են»:

Իսկ Վլադիմիր Իլյին, իհարկե, գիտեր, վոր միջնակների հարցը կծագի մեզ մոտ: Վորպես թե, տրակտորը գյուղացու միտքը կբացի, և հին կյանքն ամբողջ կշրջվի: Յերբ նա խոստացավ մեզ տրակտոր ուղարկել ասավ.

— Կուղարկեմ ու ինքս մի անգամ ել կգամ ձեզ մոտ:

Ու սպասում էլինք նրան:

Բայց հետո պատահեց անհա — յերեկոյան դեմ լուր առանք. «Մեռավ Վլադիմիր Իլյինը»: Մութն եր արդեն: Մարդիկ սկսեցին մեկը մյուսի հետևից հավաքվել համայնական խրճիթում: Ներս են մտնում, գլխարկ վերցնում ու գլուխ տալիս:

— Միթե ճիշտ է, տղերք:

Վ. Պ. Մալաֆյեվա. Կանայք հավաքվել են իրար գլխի: Ենպեսները կան, չեն հավատում. «Կարելի յե, ճիշտ չի, — չե վոր նա դեռ ամուր եր»:

Ել ինչը ճիշտ չի, յերբ Կուրկովն յեկավ լրագիրը ձեռին, —

— Մեռել ե: խնդրում եմ՝ վտարի
կանգնել:

Ուզում ե յերգել, բայց կոկորդը բռնը-
վել ե, և կանայք բոլորը լաց յեղան...

Ս. Ս. Ս. Ղմաբին. Սկսեցինք մենք եղ-
տեղ խորհուրդ անել. «Պետք ե մարդիկ
ուղարկել Մոսկվա»: Վորոշեցինք ուղարկել
Սերգեյ Կուրկովին և Դմիտրի Ռոդիոնովին:

Դրանք գնացին: Իսկ կուլակների դամ-
քաշները եստեղ ել մեջ ընկան իրենց պրո-
վոկացիաներով: «Ախ ու վախ, հիմա հան-
կարծ խորհրդային իշխանությունը շուռ չգա»: Բայց ժողովուրդն եստեղ իսկույն հայ տվեց
դրանց. «Սուտ եք ասում, սողուններ, ցեցեր:
Չի կարող եղպես բան լինել, վոր խորհրդային
իշխանությունը շուռ գա: Լենինը մեռավ—
հավատարիմ մի մարդ կփոխարինի նրան»:
Մենք են ժամանակ ինչպես հարկն ե չեյինք
ճանաչում ընկեր Ստալինին: Զգում եյինք
միայն, վոր այդպիսի մարդ կա անպայման:

Վ. Պ. Մալաֆյեվա. Դե, եղպես ել
յեղավ, առանց ընդհատվելու, թեև ական
առաջը շատ քար քցեցին: Բայց և այնպես
բանը չընդհատվեց, և գնաց առաջ ու առաջ:
Դուրս յեկանք կոլխոզի ճանպան:

Հիմա մենք հարյուրից ավելի տրակտոր
ուենք, և կալսիչներ, և թակիչներ, և ճմլոդ
գործիքներ...

Ցեղական կովեր ենք ձեռք բերել... Են
ժամանակ նրան ցույց տալու բան չունեյինք,
բացի ելեկտրական լույսը: Իսկ հիմա—վորն
ասեմ: Ժողովրդի միջից ողաչուներ ել են
դուրս յեկել, ինժեներներ ել, բժիշկներ ել:
Յես հինգ թոռն ունեմ—ու բոլորն ել սո-
վորում են:

Ս. Ս. Ս. Ղմաբին. Յես իմ մասին կա-
սեմ, չնայած վաթսուն տարեկան եմ: Պար-
տավորվել եմ տասնումեկ ցենտներ վուշ
ստանալ, մի տոնն սերմացու: Հին ժամանակ
վրաս կծիծաղեյին. խենթացել ե մարդը: Բայց
յես հողն ուղարկեցի անալիզի և ուցեպտ
ստացա. պահանջվում ե հողը պարարտաց-
նել սուպերֆոսֆատով, ֆոսֆորային ալյու-
րով, կալյումական ազով, մոխրով և սելիտ-
րայով:

Յես ամեն ինչ ձեռք բերի: Ցանեցի վոչ
թե մի շարքով, այլ խաչաձև: Բազան կազ-
մակերպեցի: Յեվ ավելին տվի, քան խոստա-
ցել եյի: Հին ժամանակ կախարդ կասեյին,
բայց հիմա վոչ մեկը չի ել զարմանում:

Լենինն ու Ստալինը մեր կյանքն են-
պես կարգի բցեցին, վոր կոլխոզային մարզն
ամեն ինչ ձեռք ե բերում:

ԻՆՅԻՉԸ ՄԵՌԱՎ

Յես եդ ըոպեյին թեյ եյի խմում: Մեծ
վորդիս՝ Վասիլի Գեորգիևիչը ներս վազեց, թե՛
— Հայրիկ, Իլյիչը մեռավ:

Եդ պատահեց հունվարի քսանումեկին.
Ժամը վեցից հիսուն ըոպե անց Վլադիմիր
Իլյիչը մեռավ:

Թեյի ամանը ձեռիցս ընկավ՝ ջարդվեց:
Մարմնովս տաք ու հով անցավ...

Քուրքս, փափախս վերցրի: Եդ գիշեր հենց
մեզ մոտ եյին Հուզմինսկ գեղացի Ստար-
շինին յեղբայրները: Նրանք ել հուզվեցին,
իրար անցան:

— Գնանք Գորկի, — ասում եմ զրանց:
Նրանք թե՛

— Մեզ ենտեղ մոտ չեն թողնի:

Յես ասում եմ.

— Գնանք, վազենք շուտ:

Յերբ տեղ հասանք, պահակները կանգ-

նած եյին դուրսը: Անցանք առանց դես ու
դենի: Սենյակում պառկած եր Վլադիմիր
Իլիչը՝ դարչնագուլյն հագուստը հագին. մի
ծերունի գլխակողմը պատվաւոր պահակ եր
կանգնել. մեկ ել վտաքերի կողմը կանգնել
եր մի տարիքավոր կնիկ՝ վոչխարի մորթուց
քուրքը հագին:

Չեմ հիշում ինչ պատահեց հետո, յես
հեկեկացի:

— Վլադիմիր Իլիչ, դուք անժամանակ
մեռաք:

Գրի յե առնված 1937 թ. Մոսկվայի
մարզի Պոդոլսկի օջառի Յամ գյու-
ղում Գ. Վ. Սկորոմիսլովի (63 տ.)
պատմածից:

ՅԵՐԿՈՒ ԲԱԶԵ*)

Նստած կանաչ կաղնու վրա
Տափաստանում լայն անսահման
Զրուցում եյին յերկու բազե,
Յերկու բազե ազնիվ, թառլան:

Մարդիկ նրանց ճանաչեցին,
Մարդիկ նրանց վողջունեցին,
Առաջինը լենինն եր մեծ,
Յերկրորդ բազեն—Ստալինն եր մեծ:

Առաջինը լենինն եր մեծ,
Յերկրորդ բազեն—Ստալինն եր մեծ,
Շուրջը նրանց թեատարած
Բազեների յերամն եր մեծ:

Առաջինն այն յերկրորդից
Բաժանվում եր ընկերուջից,
Նա մեռնելիս խոսքը վերջին
Ուղղեց ընկեր իր բազեյին:

*) Բանաստեղծությունը թարգմանել է Հո. Պողոսյանը:

— «Ազնիվ ընկեր, թառլան բազե,
 Ժամն ե յեկել անշատումի,
 Վողջ հոգսերը մեր աշխարհի
 Քեզ վրա յեն ընկնում հիմի»:

Իսկ այն մյուսը պատասխանեց.
 — «Իու մոռացիր հոգսերդ մեծ,
 Քեզ յերզվում ենք, վոր հավիտյան
 Մենք չենք շեղի մեր լայն ճամբան»:

Նա յերզումը իր կատարեց,
 Իր յերզումը այն մարտական,
 Վողջ յերկիրը յերջանկացրեց,
 Խինդ պարզեց մեզ անսահման:

Իր յե առնված «Լեհիեյան դարբնոց» գործարանի կորպուսային բաժանմունքի բանվորների խումբից—Կիևի ֆազառում:

А. 1939 г.
 Акт № 146
 Вкладн. л.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թե ինչպես Ֆեդոսիա Նիկիտիչնան յեղավ Լենինի մոտ	էջ 3
Կոճակը	7
Վառարան շինողը	9
Հանդիպում	14
Մեղուններ	17
Հյուրը	19
Իյիչը մեռավ	31
Յերկու բազե	33

Պատ. խմբագիր՝ Սիմակ
 Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
 Սրբազրիչ՝ Հ. Մանուկյան

Դրավիտի լիազոր՝ Վ. 2112 Հրատ. 4790.

Պատվեր 57. Տիրաժ 3500.

Թուղթ 62x94. Տպագր. 2 մամ.

Մեկ մամ. 48960 նշան.

Հանձնված է արտադրության 9 հունվարի 1939 թ.

Ստորագրված է տպագրության 2 փետրվարի 1939 թ.

Պետհրատի I տպարան, Լենինի № 65.

1900

THE UNIVERSITY OF TEXAS
AT AUSTIN
1900

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

228

Арм.
13-3073_a

6

✓

РАССКАЗЫ О ЛЕНИНЕ
Гле Арм. ССР, Ереван, 1939 г.

«Ազգային գրադարան»



NL0143430

16688

3-30732